20001

1

372
Ц·36

1908

2010

ԱԽԱԼՔԱԼԱՔԱՅ ՀԱՅՈՑ Ս. ՄԵՍՐՈՎԲԵԱՆ ԵՒ Ս. ՍԱՆԴԽՏԵԱՆ ԾԽԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԵՐԿԴԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ

1905—6, 1906—7 և 1907—8

ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻ

ՀԱՇՎԻՆ

2002

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԱԽԱԼՔԱԼԱՔ.
Տպարան Մ. Գրիգորեանցի.
1908

372
Ա-36

8516

372
Ա-36

370
Ջ147-ՀԱ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԱԽԱԼՔԱԼԱՔԱՅ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ.

1905 թիւ Օգոստոսի 1-ի հռչակաւոր Կայսերական հրովարտակից յետոյ էր, որով վերազարձուում էր եկեղեցական կալուածքները և վերաբացուումէին հայկական ծխական դպրոցները, երբ Ախալքալաքայ հայ հասարակութիւնը ընտրելով մեզ հոգաբարձու, յանձնեց կառավարելու իր դպրոցները։

Բայց ինչ դրութեան էին դպրոցները. խարխուլ, կիսաքանդ ու աւեր, առանց պարագաների, մօտ հինգ հարիւր ռուբլի պարտք և ոչ մի կոպէկ։ Հոգաբարձութիւնս ստանալով ուսումնարանները, ոչ մի կոպէկ չունենալով, հէնց 1905 թիւ Սեպտեմբերին ծախսեց հինգ հարիւր ռուբլի վերանորոգութեան, տուեց մօտ 300 ռուբլի պարտք, չինել տուեց հինգ հարիւր ռուբլու սեղաններ և չնայած որ մօտ 1300 ռուբլի ծախսը պարտքով արինք, չնայած որ ուսումնարաններէ իսկական մուտք միմիայն 3000 ռուբլի ունէր, բայց մենք հաւատ ունենալով մեր ուժերի և ժողովրդեան վերայ, հրաւիրեցինք 5000 ռուբլի ռօճիկով ուսուցչական խումբ, ուսումնարանի հարկի տակ ընդունեցինք մօտ 500 աշակերտ-աշակերտուհի և առաջին տարին (1905—6 թ.) ծախսելով 6744 ռ. 98 կոպ., առանց դէֆիցիտի փակեցինք տարվայ հաշիւը, դեռ մի քանի ռուբլի էլ մնացորդ թողնելով։ Այդ տարին ունէինք 8 բաժանմունք-առաջին, երկրորդ, երրորդ պատրաստականներով, մի բաժանմունք ծաղկոց, մի բաժանմունք էլ հասակ առած և ուսումնարան չյաճախած օրիորդների, բոլորը տասը բաժանմունք-մօտ 500 հոգի սովորողներով։

Տարին սկսուեց շատ խաղաղ, դասերը իր ժամանակին, վերջացաւ նոյնպէս իր ժամանակին, բայց տարվայ վերջին երկպառակութիւն ընկաւ մի կողմից մի հոգաբարձուի, և աւագ ուսուցչի, միւս կողմից երեք հոգաբարձուի, երեցփոխի և մնացեալ ուսուցիչների մէջ և դրանց յարաբերութիւնները ստացաւ սուր կերպարանք։

Այդ ժամանակ արդէն դասերը վերջացած լինելով, հոգաբարձութիւնը յուլիսի սկսբներին ժողով ունեցաւ խորհելու ապագայ տարվայ ուսուցչական խմբի մասին։ Այդ ժողովում աչքի առաջ ունենալով աւագի և ուսուցչական խմբի գժգոհութիւնները, միաձայն որոշուեց (ժողովից բացակայէր հոգաբարձու պ. Վ. Քաջազնունին) արձակել աւագ ուսուցիչ պ. Խ. Դիլանեանցին, հրավիրել հին խումբը, այլ ևս չունենալ աւագ ուսուցիչ և ուսումնարանի կառավարութիւնը բացի տնտեսականից, յանձնել մանկավարժական խորհրդին, որոնք իրենց հերթում պէտք է ունենան իրենց միջից ընտրուած մի հերթակալ աւագ, որը պէտք է յարաբերութիւն պահէր հոգաբարձութեան հետ... Հոգաբարձութիւնս այս քայլը անելով երկու նպատակ ունէր. առաջին վերացած կ' լինէր ուսուցչական խմբի միջից գժտութիւնները, որովհետև նրանց դլխին չէինք դնելու մի հրամայող աւագ, այլ նրանք կառավարելու էին ինքն իրենց և հոգաբարձութեան առաջ էլ ոչ թէ պատասխանատու էր միայն մի աւագ, այլ ամբողջ մանկավարժական խորհուրդը կամ ուսուցչական խումբը։ Բացի դրանից տնտեսած կ' լինէինք մի քանի հարիւր բուբլի, որը մեր աղքատ ուսումնարանի համար ունէր իր որոշ նշանակութիւնը։ Հոգաբարձութեանս այս վճռից դժգոհ, հրաժարուեցին հոգաբարձու պ. Վ. Քաջազնունի և երկու վարժուհի։ Արձակուած աւագ ուսուցիչ պ. Խ. Դիլանեանցը և հրաժարուած պ. Վ. Քաջազնունին դրանից յետոյ սկսեցին արշավանք հոգաբարձութեան և ուսուցչական խմբի դէմ. նրանք դանազան ասէկոսէներով գրգռեցին ժողովրդեան. ժողովրդի անգիտակից մասը սկսեց աղմկել, անժամանակ հաշիւ պահանջել, որին իսկայն հոգաբարձութիւնս ընդ առաջ գնաց ու թէ և տարին չէր վերջացել, բայց Օգոստոսի սկսբներին դրեց իր մանրամասն հաշիւները հրապարակական ժողովի առաջ... Ժողովուրդը տեսաւ, հասկացաւ, շնորհակալութիւն յայտնեց և ցրվեց... Այժմ սկսուեց մի ուրիշ գործ, թայֆան սկսեց ժողովրդի մի մասը գրգռել թէ չենք ուզում ուսուցիչներին, բայց հոգաբարձութիւնը ուշադրութիւն չ'դարձրեց այդ պատահական, ապօրինի պահանջին և շարունակեց իր գործը, լրացրեց պակաս ուսուցիչների ցանկը, շինութիւնը փոքր

լիներով փակեց ծաղկոցը, մեծ օրիորդների համար բացուած միամեայ դասարանը և բաց արեց չորս նոր բաժանմունք, որով հնի հետ եղաւ 12 բաժանմունք—առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ տարվայ դասընթացքներով։ Թայֆան իր նպատակին չ'հասնելով այս կերպ, մտածեց խանգարել այլ կերպ, նրանք բոյկոտ հրատարակեցին, որ ժողովուրդը ուսումնարան չ'ուղարկէ իր դաւակներին... Բայց երբ Սեպտեմբերի 1-ին զանգը հնչեց, բոյկոտը հակառակ արդիւնք տուեց, փոխանակ նախկին տարվայ մօտ 500 աշակերտ-աշակերտուհու, այժմ ուսումնարան լցուեցին մօտ 600 և ծնողները բռնած իրենց երեխաների ձեռներից, դունդագունդ գալիս էին ուսումնարան, յանձնում երեխային, յայտնում իրենց դաւակցութիւնը թայֆայի գործունէութեան մասին, խրախուսում շնորհակալութիւն յայտնում և գնում... Այսպէս սկսուեց մեր պաշտօնավարութեան երկրորդ տարին, այն է 1906—7 թ. ուսումնական տարին. մի խաղաղ, արդիւնաւէտ տարի, ուսուցիչները իրենց կոչման բարձրութեան վերայ, ժրաջան, համերաշխ, աշխատող. նրանք բացի իրենց դասերից, ամեն շաբաթ ունենում էին մանկավարժական ժողով, փորձնական դաս, գրական երեկոյ և ժողովրդական հանրամատչելի դասախօսութիւններ. այստեղ պէտք է ասել ուսուցչական խմբի հետ գործում էին այն ժամանակուայ գործակալ Ուխտանէս վարդապետ Տէր Դաստպարեանցը, հոգաբարձու Վ. Զահպարոնեանցը և քաղաքիս ինտելիգենցիայի մեծամասնութիւնը։ Բացի վերոյիշեալ բաներից, նրանք տալիս էին երեկոյթ, ներկայացում, կազմակերպում էին հանդէսներ, մի խօսքով թէ ուսումնարանում, թէ դուրսը կեանքը եռումէր։ Իսկ հոգաբարձութիւնն էլ ամեն կերպ խրախուսում էր և նիւթական աջակցութիւն ցոյց տալիս։ Այդ տարին բացի այն, որ աղքատ աշակերտներին (20%) թոշակից ազատեցինք և տուինք նրանց ուսումնական պիտոյքներ, պարագաներ և շորեր. ձեռնարկեցինք ուսումնարանի գրադարանի վերակազմութեան և կրպակների մասնակի վերանորոգութեան։ Այդ տարին մենք ունէինք տասներկու բաժանմունք, տասներկու ուսուցիչ վարժուհի, մի վերակացու, երկու ծառայ և մօտ 600 աշակերտ, որոնց վերայ ծախսել էինք

6043 ր.—8 կոպէկ։ Նոյն դրութեանն էր մեր պաշտօնավարութեան երրորդ տարին (1907—8 թ.), միայն աւելացրինք հինգերորդ տարուայ դասընթացք (II դասարանի ծրագրով), ունէինք ուսուցիչների նոյն թիւը, քիչ զանազանութեամբ նոյն աշակերտների քանակութիւնը և նոյն պայմանները։ Այդ տարում ուսումնարանի գրադարանը ճոխացրինք լրագրներով և մի քանի հարիւր հատոր գրքերով։ Բայց այս տարում զգալի եղաւ ուսումնարանի շինութեան անյարմարութիւնները։ Հետևաբար շինութիւնը հնանում էր, աշակերտների թիւը շատանում, պայմանները շատ հակաառողջապահական էին, ուսուցիչները տրանջում էին. բայց ինչ կարող էինք անել հոգաբարձուներս, միջոց չ'կար, պէտք էր առ ձեռն քսան հազար ռուբլի, իսկ այդ գումարը երազ էր մեզ համար, որովհետև ժողովուրդը շատ աղքատ, իսկ մեծ հարուստները քիչ։ Հոգաբարձութեանս դանձապահ Վ. Զահպարոնեանցը, հոգաբարձութեան ժողովին ներկայացրեց իր կազմած ծրագիրը-թէ ի՞նչ միջոցներով կարելի է շինել նոր ուսումնարան. Հոգաբարձութիւնս լսեց Զահպարոնեանցի մանրամասն բացատրութիւնները, հաւանութիւն տուեց այդ ծրագրին և երկու արձանագրութեամբ լիազօրութիւն տուեց նրան որ սկսէ բանակցութիւնները։

Զահպարոնեանցի նախագծով պէտք է ծախսել մօտ քսան հազար ռուբլի, որով կ' շինուէր մի մեծ դահլիճ (50 ք. ս.), 16 մեծ սենեակներ, մի մեծ կառիտոռ (50 ք. ս.), փայտանոց, ծառաների բնակարան, մի մեծ պարսպապատ բակ և ուրիշ անհրաժեշտ յարմարութիւններ։ Իսկ այս քսան հազար ռուբլին հետևեալ կերպով պէտք հաւաքուէր։

1. Եկեղեցու տնտեսած փողերից . . . . 2000 ր.
2. Հոգաբարձութեանս ջանքերով-Բայբուրցեաններից ստացուելիք, որի համար տուել են ստորագրութիւն դեռ 1906 թուին 'ի յիշատակ իրենց հանգուցեալ պապին, որը դեռ այժմս էլ չէ ստացուել . . 3000 ր.
3. Ուսումնարանների № 17—18 կրպակը նստող պ. Յ. Դիլանեանից, որը պէտք է հետևաբար հետ

գնէր կրպակի քրէհից ընթացս վեց տարուան, դեռ այժմեան քրէհից էլ աւել պէտք է տար 15%. . 3000 ր.
4. Ոչ մի արդիւնք չ'բերող մօտ 2000—2200 ք. ս. եկեղեցական բաց մի հող պէտք է ծախուէր . 4000 ր.
5. Տնտեսուած հասարակական յատուկ գումարներ, որոնք գտնուում էին զանազան մարդկանց մօտ . 1500 ր.
6. Ուսումնարանի փակ եղած ժամանակը ինը տարուայ ընթացքում Ակլցխայի Ս. Փրկչի եկեղեցոյ կալուածքներից չ'ստացած հազարական ռուբլին. 9000 ր.

Բոլորը . . 22500 ր.

Ուրեմն այս ծրագրով դէռ 2—3 հազար էլ կարելի էր աւել ստանալ։ Այստեղ կասկածելի է Ակլցխայի Ս. Փրկիչ եկեղեցոյ ստանալիք 9000 ռուբլին, բայց մնացեալ 13500 ռուբլին մի տարուայ ընթացքում կարելի էր հաւաքել և գործը սկսել, բայց նախ քան այդ հոգաբարձութիւնս ուզեցաւ ծխական ժողովի հաճութիւնը առնել, որ ըստ այնմ սկսէ ուսումնարանի շինութիւնը։ 1908 թ. յունվար ամսում հրաւիրուեց ծխական ժողով, բայց այդտեղ թայֆան շարժուեց, սկսուեց տափակ վիճաբանութիւններ, ժողովը շատ երկար տևեց և ժողովուրդը ոչ մի եզրակացութեան չ'եկած ցրուեց, թողնելով շարունակութիւնը մի ուրիշ անգամ։ Հոգաբարձութիւնս զ'զուած թայֆայի ոտնձգութիւններից, իր պաշտօնավարութեանն էլ մնացած լինելով մի քանի ամիս, այլ ևս ժողով չ' գումարեց վճռելով թողնել այս գործը շարունակելու յետագայ հոգաբարձութեան։

Այժմս հոգաբարձութիւնս ներկայացնելով այս բարոյականի և տնտեսականի հակիրճ հաշիւը յարգելի հասարակութեանդ, կ'ասէ իր վերջին խօսքը։ Հոգաբարձութիւնս արել է այն, ինչ որ ուժնէ պատել. եթէ մեր հարևան քաղաքներում ուսուցիչները ստանում էին դասագին 25—30 ռուբլի, մեզ մօտ ամենաօրինակելի ուսուցչական խումբը ստանում էր 15—20 ռուբլի. եթէ ուրիշ տեղ 600 աշակերտի համար ծախսում էին տասնեակ հազարներ, մենք ծախսել ենք մօտ 6000 ռուբլի, դա էլ ոչ թէ ձեռք էր բերում ուղղակի ուսումնարանի եկամուտներից, այլ դրա կէսը, մօտ 3000 ռուբլին

հոգաբարձութեանս ջանքերով, երեկոյթներ տալով, ներկայացումներ կազմակերպելով, աւետիս ման գալով, մուրալով և ուրիշ հազար ու մի տեսակ միջոցների դիմելով։ Այժմ այս հաշիւը ներկայացնելով յարգելի հասարակութեանդ, խնդրում ենք ամեն մէկից, եթէ

ՀԱՇԻՒ

ՄՈՒՏՔ.

1	Կրպակներից	2057	92
2	Ախլցխայի Ս. Փրկիչ եկեղեցոյ կալուածքներից.	932	10
3	Բուռնաշէթի արդիւնքներից	160	—
4	Յովնանեանի կտակով 1905 թուի հասանելիք .	150	—
5	Աւետիս ման գալուց	332	—
6	Նուէրներ	137	35
7	Երկու անգամ վիճակախաղից	471	55
8	Ներկայացումներից	282	46
9	Թոշակներից	2206	50
10	Գրքերից և տետրակներից	18	36
11	Իրեր ծախելուց	20	—
	Գումարն է . .	6768	24

մի որևէ կտակածի կամ թիւրիմացութեան տեղիք կայ, շնորհ բերել հայոց ուսումնարանի ուսուցչանոցը և այնտեղ մանրազնին քննել մատեանները և դրանց հետ փաստաթղթերը, որոնք ամեն մի անհատի առաջ բաց կ՝ լինեն։

1905—6 Թ.

ԵԼՔ.

1	Ուսումնարանի և կրպակների վերանորոգութեան.	444	17
2	Մանուկ տղա Բայբուրդցեանի հոգեհանգստեան և պատգամաւորներին ճանապարհածախս . .	17	10
3	Ուսուցիչներին ռոճիկ	4770	—
4	Ծառաներին ռոճիկ.	311	—
5	Սեղանների	498	74
6	Կառավարութիւնից մեզ յանձնած պարտքերի .	222	68
7	Վառելիք	43	73
8	Լուսաւորութեան	10	27
9	Տօնածառի պակասորդը վճարած . . .	12	25
10	Եկեղ. կալուածք. տուրքեր քաղաք. վարչ. մի մասը	59	49
11	Փոստի, հեռագրի, գրասենեակի ծախսեր և այլն .	58	1
12	Տպարանի	38	97
13	Ձեռագործի նիւթերի	155	25
14	Ջրի	24	—
15	Մաքրութեան	48	—
16	Գրադարանի գրքերի	31	32
17	Առ ձեռն գրամ	23	26
	Գումարն է . .	6768	24

ՀԱՇԻՒ

ՄՈՒՏՔ.

1	Առ ձեռն դրամ փոխանցուած 1905—6 թուից	23	26
2	Կրպակներից	1851	4
3	Աւեսիս ման գալուց	326	10
4	Թոշակներից	2030	—
5	Նուէրներ	175	—
6	Իրեր ծախելուց	6	20
7	Գրքերից և տետրակներից	41	97
8	Աշակերտներին ծախուած ձեռագործի նիւթերից.	44	14
9	Ներկայացումներից	218	19
10	Վիճակախաղից	254	31
11	Մոմի արդիւնքներից սկսած 1905 թ. Սեպտեմբերից մինչև 1907 թիւ Դեկտեմբերի 31-ն .	800	—
12	Յովնանեան ուսումնարանից 1906 թուի վճարը.	150	—
13	Պարտք այս տարուանից փոխանցուած 1907—8 թուականի մատեանում	122	87
	Գումարն է . .	6043	8

Ծանօթութիւն. 1905—6 և 1906—7 թ. ընթացքում վառելիքի ծախսը քիչ է, որովհետև այդ տարիներում ամեն տարի մի մի

1906—7 թ.

ԵԼՔ.

1	Ուսուցիչներին ռոճիկ	4716	41
2	Ծառաներին ռոճիկ.	300	—
3	Գրի	27	—
4	Մաքրութեան	48	—
5	Վառելիք	41	20
6	Ձեռագործի նիւթերի	280	59
7	Գրադարանի համար գրքեր	61	30
8	Աղքատ աշակերտներին գրքեր և հագուստ .	78	50
9	Տպարանի	19	50
10	Հիւանդ ուսուցիչ Ա. Խախանեանցին տանող պ. Ալօղեանցին վարձ և ճանապարհին մանր ծախս.	14	—
11	Լուսաւորութեան	9	54
12	Փոստի, հեռագրի, գրասենեակի ծախսեր և այլն .	59	29
13	Ուսուցիչ Մ. Այվազեանցին ուղարկուց թեմական առաջնորդի մօտ իբրև պատգամաւոր մի քանի անյետաձգելի հարցերի համար. . . .	25	--
14	Ուսումնարանի և կրպակների վերանորոգութեան.	180	25
15	Նստարանների	182	50
	Գումարն է . .	6043	08

քառ. սաժէն փայտ էր ընծայում ուսումնարանին պ. Ա. Իւզբաշեանը, որոնք հաշուի մէջ մտած չեն։

ՀԱՇԻՒ

ՄՈՒՏՔ.

1	Իրեր ծախելուց	4	—
2	Ակլցխայի Ս. Փրկիչ եկեղեցոյ կալուածքներից.	3000	—
3	Նուէրներ	40	—
4	Աւետիս ման գալուց	326	10
5	Երեկոյթից	89	73
6	Մոմի արդիւնքներից սկսած 1908 թ. Յունվարից մինչև 1908 թ. 1-ն Մայիսի . . .	100	—
7	Վիճակախաղից	276	50
8	Թոշակներից	2084	—
9	Կրպակներից	2310	—
	Գումարն է . .	8230	33

Դուրս գալով մուտքի գումարից ելքի գումարը, մնում է առ

1907—8 թ.

ԵԼՔ.

1	Անցեալ տարուանից պարտք	122	87
2	Ուսուցիչներին ռոճիկ	5326	—
3	Ծառաներին ռոճիկ.	324	—
4	Վառելիք	96	—
5	Լուսաւորութեան	11	70
6	Մաքրութեան	48	—
7	Ջրի	26	—
8	Սեղանների	151	15
9	Գրադարանի համար գրքեր	153	20
10	Աղքատ աշակերտներին	39	95
11	Տօնածառի պակասորդը	39	2
12	Նալոգ դախօտ թէ հին պարտքը և թէ նորը .	598	37
13	Մանր ծախս թէ գրասենեակի, թէ հեռագրի, փոստի և այլն	110	71
14	Տպարանի	37	10
15	Ձեռագործի նիւթերի	279	17
16	Ուսումնարանի և կրպակների վերանորոգութեան.	358	79
17	Հաշիւները տպելու համար վճարուած է տպարանատէր պ. Միսաք Գրիգորեանցին . .	30	—
	Գումարն է . .	7752	03

Ձեռն դրամ չորս հարիւր եօթանասուն և ութը ռուբլի երեսուն կո-

պէկ, (478—30) կ. որը յանձնուած է ուսումնարանի 1908—9 թուականի հոգաբարձու գանձապահ պ. Վաղարշակ Կարապետեանցին։

Ծանօթութիւն. 1907—8 թուի հաշուում մուտք չէ գրուած գրքերից ստացուած մօտ 65 բուք. եկամուտը, այլ բաժանուած է այդ փողերով գրքեր և տետրակներ աղքատ աշակերտներին.

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐ { Բժ. Ա. Սարգսեանց.
Յ. Մեծատունեանց.
Վ. Զանպարոնեանց.

ԱՆՁՆԱՓՈԽԱՆՈՐԴ Ս. Յարութիւնեանց.

ԵՐԵՑՓՈԽ Յ. Պապոյեանց.

ՔԱՐՏՈՒՂԱՐ Տ. Տօնամպանեանց.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
именна. Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Печ. разр. 20 Дек. 1908 г. за Ахалк. Уѣздн. Нач. Чопкадзе.
Типогр. М. Григорьяна въ Ахалкалаки.

20001

2013